<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **28.07.2022թ.**

2022 թվականի հուլիսի 28-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստ:

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Կ. Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ–ի նախագահ
Գ. Սահակյան	- խորհրդի քարտուղար
Ա. Կոտոլյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Բաբայան	- «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար

Լ. Մինասյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Բացակայում էին՝

Լ. Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ-ի մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար

Քվեարկության օրակարգային հարցեր.

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտին հավանություն տալու մասին :
   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

3. Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալու մասին:
   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

4. Արտադրական կանեփի լաբորատոր փորձաքննություն իրականացնող ՀՀ նշանակված լաբորատորիաների վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա. Ասոյան

5. Տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխությանը հավանություն տալու մասին:
   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

6. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
   Զեկուցող՝ Ա. Կոտոյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկուցեց Արմեն Կոտոյանը, բովանդակային ներկայացրեց անհատներին տրամադրվող գազի որակի ստուգման հետ կապված ընթացակարգերը և հայտնեց, որ բացակայում են գազի կալորիականությունը ստուգելու համար համապատասխան լաբորատոր սարքեր: Արթուր Ասոյանը նշեց, որ ներբնակարանային գազի վերահսկողության պատշաճ իրականացման համար տեսչական մարմնի կողմից անհրաժեշտ է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը ձեռք բերել գազի կալորիականությունը ստուգելու համար համապատասխան լաբորատոր կարողություններ, միաժամանակ անհրաժեշտ է նախատեսել համապատասխան իրավական կարգավորումներ, մասնավորապես՝ ինչպես է իրականացվելու մուտքը բնակարան, ու՞մ մոտ են իրականացվելու ստուգումները, ի՞նչ հաճախականությամբ, ի՞նչ գործիքակազմով, ի՞նչ իրավական ակտերով սահմանված պահանջների նկատմամբ է իրականացվելու վերահսկողությունը, ինչպես են կարգավորվելու մարզային վերահսկողությունը՝ տարածքային ստորաբաժանումների բացակայության պայմաններում: Վահան Քերոբյանը առաջարկեց երեք շաբաթվա ընթացքում ուսումնասիրել միջազգային փորձը և ներկայիս գործող իրավական կարգավորումները և հանդես գալ առաջարկությամբ՝ գազի, հոսանքի, բջջային և ինտերնետ կապի վերահսկողությունը արդյունավետ իրականացնելու, դրա համար նախատեսվող նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների, պահանջվող մարդկային ռեսուրսի, լաբորատոր կարողությունների վերաբերյալ՝ համագործակցելով ՍՉԱՄ-ի հետ: Արմեն Կոտոյանը Խորհրդի անդամներին առաջարկեց հարցի հետ կապված մտահոգացումներ ունենալու դեպքում ներկայացնել առաջարկություններ:

Հաջորդ հանձնարարականը վերաբերում էր ՀՀ ՊԵԿ-ի համակարգին օնլայն հասանելությունն ապահովելուն, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել ավտոմատ ծանուցումներ, սերտիֆիկատների հեռավար ստուգում: ՊԵԿ-ի հետ համագործակցության արդյունքում, խորհրդակցելով հավատարմագրման մարմինների հետ, որոշվել է իրականացնել աշխատանքներ ուղղված ճանապարհային քարտեզի ստեղծմանը, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել իրազեկման աշխատանքներ ՀՀ տարածք ոչ

պարենային արտադրանք ներմուծող տնտեսավարողների հետ: Իրականացվելիք աշխատանքների համար սահմանվեց երեք շաբաթյա ժամկետ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցին:

2. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտին հավանություն տալու վերաբերյալ .

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը ներկայացրեց Տեսչական մարմնի բյուջետային հայտը և քննարկման արդյունքում այն արժանացավ հավանության:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հավանություն տալ Տեսչական մարմնի բյուջետային հայտին:

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալ էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալ էլեկտրոնային քվեարկությամբ:

4. Քննարկվեց օրակարգի հարց՝ արտադրական կանեփի լաբորատոր փորձաքննություն իրականացնող ՀՀ նշանակված լաբորատորիաների վերաբերյալ.

Արթուր Ասոյանը նշեց, որ ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի թիվ 624-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը նշանակել է վերահսկողության շրջանակներում արտադրական կանեփի (արտադրանքի) փորձաքննություն իրականացնող լաբորատորիա:

Այնուհանդերձ, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 45.8-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումը չի սահմանում, որ նման լաբորատորիա կարող է նշանակվել միայն մեկը: Միաժամանակ, շեշտեց, որ նման պարագայում՝ մի քանի լաբորատորիաների առկայության դեպքում, անհրաժեշտ է մշակել մեխանիզմ յուրաքանչյուր փորձաքննության համար մրցույթ հայտարարելու կամ ՍԱՏՄ օրինակով լաբորատոր ծառայություններ իրականացնելու շրջանակային համաձայնագրերով սահմանել յուրաքանչյուր փորձաքննության համար պատահականության սկզբունքով լաբորատորիա ընտրելու ձևաչափ, ինչպես նաև արձանագրել այս հարցերի կարգավորման համար լիազորող նորմերի բացակայության խնդիրը: Առաջարկվեց քննարկել Ստանդարտների ազգային ինստիտուտի փորձարկման լաբորատորիային ևս վերահսկողության շրջանակներում արտադրական կանեփի (արտադրանքի) փորձաքննություն իրականացնող լաբորատորիա նշանակելու հարցը: Արթուր Ասոյանը առաջարկեց դիտարկել նաև վերջինիս սույն ոլորտում ռեֆերենս լաբորատորիա նշանակելու հնարավորությունը՝ պայմանով, որ նույն լարբորատորիան արտադրական կանեփի նույն փորձանմուշի համար չի կարող հանդես գալ միաժամանակ և առաջնային և ռեֆերենս լաբորատորիա:

Արտադրական կանեփի լաբորատոր փորձաքննություն իրականացնող ՀՀ նշանակված լաբորատորիաների վերաբերյալ հարցի քննարկման ընթացքում Վահան Քերոբյանը առաջարկեց արտադրական կանեփի փորձաքննութուն իրականցնելու լաբորատոր սարքի ձեռքբերման համար հայտարարել պայմանական մրցույթ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց արտադրական կանեփի լաբորատոր փորձաքննություն իրականացնող ՀՀ նշանակված լաբորատորիաների վերաբերյալ քննարկմանը:

5. Քննարկվեց օրակարգի հարց՝ Տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխությանը հավանություն տալու վերաբերյալ.

Արմեն Կոտոյանը ներկայացրեց Տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխությանը հավանություն տալու վերաբերյալ օրակարգային հարցը, համաձայն որի Տեսչական մարմնի հաստիքացուցակը մեկ հաստիքով կպակասի և 65 հաստիքի փոխարեն կլինի 64: Կվերանա Տեսչական մարմնի ղեկավարի 2-րդ օգնականի հաստիքը:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հավանություն տալ Տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխությանը:

6. Քննարկվեց օրակարգի վերջին հարցը՝ հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթվի համաձայնեցման վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի օգոստոսի 25-ին-ին ժամը 14:00-ին:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի օգոստոսի 25-ին ժամը 14:00-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Գ.Սահակյան**

ստորագրություն